



**Մայր Աթոռոյս միաբան
ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏԵԱՆՑ
ԵՐՈՎԱՆԴԵՄՈՒՄ, ՓԵՄԹՎԱՐԻ Զ-Ի ԳԻշերը վախճանուեց.**

Ահա այն գոյժը, որ Երուսաղէմի պատրիարքական
տեղապահ Տ. Դանիէլ արքեպիսկոպոսը փետրվարի 9-ին
հեռագրով հաղորդեց կաթողիկոսական տեղակալ Տէր Գէորգ
արքեպիսկոպոսին. և նորին ամենապատութիւնը հեռա-
գրով պատասխանեց՝

«Ողբում ենք Մեսրոպ արքեպիսկոպոսի մահը»

Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեան ծնուել է 1833 թուին Հին-Նախիջևան գաւառի Փորագաշտ գիւղում, մտելէ Ա. Էջմիածնի ժառանգաւորաց դպրոցը 1847 թ. մարտի 1-ին. նոյն դպրոցում ուսման ընթացքը աւարտելուց յետոյ, 1851 թուի սեպտեմբերի 16-ին ստանում է դպրութեան աստիճան ս. Էջմիածնի մայր տաճարում երջանկայիշատակ Տ. Ներսէս Ե. կաթուղիկոսից. 1856 թ. մայիսի 16-ին ձեռնադրուում է սարկաւադ Մակար եպիսկոպոսից (յետոյ կաթուղիկոս), 1857 թուի յունիսի 16-ին Պօղոս եպիսկոպոս Մալխասեանից ձեռնադրուում է արեղայ, 1859 թուին յունվարի 10-ին նշանակուում է Էջմիածնի գաւառի գործակալ, 1860 թուի յունվարի 3-ին գաւառի գործակալութեան հետկարգուում է Մողնոյ ս. Գէորգ վանքի վանահայր: Երջանկայիշատակ Տ. Մատթէոս Ա. կաթուղիկոսի № 21 կոնդակի համեմատ, 1861 թ. փետրվարի 17-ին Սինօդի № 299 հրամանով նշանակուում է Մայր Աթոռի վանական կառավարութեան անդամ: Ա. Էջմիածնի Սինօդի հրամանով № 857, 1862 թուի յունիսի 12-ին կարգուում է Նորբայազէտի գործակալ: Սինօդի առաջադրութեամբ № 696, 1864 թուի յունիսի 1-ին կարգուում է Նախավկայի ս. Ստեփաննոս վանքի վանահայր: Սինօդի № 25 հրամանով 1866 թուի յունվարի 15-ին կարգուում է Տաթևի վանքի վանահայր: Սինօդի հրամանով № 391, 1867 թ. մարտի 3-ին նշանակուել է Հին Նախիջևանի փոխանորդ: Սինօդի հրամանով № 1931, 1868 թ. սեպտեմբերի 20 նշանակուել է Երևանի փոխ-թեմակալ: 1870 թ. մարտի 20-ին Բարձրագոյնս հաստատուել է Սինօդի անդամ: 1872 թուի մարտի 26-ին երջանկայիշատակ Տ. Գէորգ Դ. կաթուղիկոսից ձեռնադրուել է եպիսկոպոս: Սինօդի հրամանով № 124, 1882 թ. յունվարի 23-ին կարգուել է Մայր Աթոռի վանական կառավարութեան անդամ: 1886 թուի յունվարի 17-ին երջանկայիշատակ Տ. Մակար կաթուղիկոսի № 26 կոնդակով կարգուել է Մայր Աթոռիս Ճեմարանի ժամանակաւոր վերատեսուչ և նոյն թուի յունիսի 1-ին արձակուել է նոյն պաշտօնից: 1887 թ. ապրիլի 22-ին Սինօդի օրագրով

յանձնաբարուել է նրան կարսում բանալ Բարձրագոյնս հաստատուած Հոգևոր Կառավարութիւն և անդամներ նշանակել: 1887 թ. յունվարի 3-ին Բարձրագոյնս հաստատուել է Շամախու թեմի առաջնորդ: 1888 թ. յունվարի 7-ին երջանկայիշատակ 8. Մակար կաթողիկոսի կոնդակով բարձրացել է ի կոչումն արքեպիսկոպոսութեան: 1895 թ. մայիսի 9-ին Բարձրագոյնս արձակուել է Շամախույ թեմի առաջնորդութիւնից: 1897 թ. մարտի 26-ին կարգուել է Հին Նախիջևանի գաւառի Երնջակի և Կարապետի վանքի վանահայր. 1907 թուին սրձակուելով պաշտօնից զանում էր Մայր Աթոռում:

Իւր երկարատև պաշտօնավարութեան ժամանակ 1853—6 թուի արեւելեան պատերազմի յիշատակին ստացել է բրօնզէ խաչ և շքադրամ: Վարձատրուել է 1860 թ. յունիսի 20-ին երջանկայիշատակ 8. Մատթէոս Ա. կաթուղիկոսից մետաքսեայ ծաղկենկար փիլոնով. 1861 թուի մայիսի 16-ին, նոյն Հայրապետից՝ վարդապետական լանջախաչով: 1873 թուի գեկտեմբերի 31-ին երջանկայիշատակ 8. Գէորգ կաթուղիկոսից՝ եպիսկոպոսական պանագէով:

Հանգուցեալ Մեսրոպ արքեպիսկոպոսը բացի վարչական պաշտօններից պարապում էր դրականութեամբ. նառուսաց կայսերական հսագիտական ընկերութեան անդամ էր. նրա անունը կապուած է Երևանի նահանգում գտնուած տասնեակ բեւեռագիր արձանագրութիւնների հետ, որոնցից մեծ մասը Մեսրոպ սրբազնի հոգածութեամբ բերուած են Մայր Աթոռու: Նա կազմել և հրատարակել է Գեղարքունի, Նախիջևանի, Շամախու գաւառների տեղագրութիւնները: Ունի բազմաթիւ յօդուածներ բևեռագրերի մասին «Ճռաքաղ, Բազմավեպ ու Արարատ» ամսագրերում և պարբերական թերթերում: 1800—թուականից սկսած անցքերի ժամանակագրութիւնն էր կազմում, որ անշուշտ շատ հետաքրքիր կարող է լինել:

Հանգուցեալ արքեպիսկոպոսը բնաւորութեամբ հեղ, ամենքին մատչելի, հիւրասէր անձն էր: Մեծ փափագ

ունէր Երուսաղէմ՝ սուրբ տեղերին ուխտ գնալու. 1907
թուի աշնանը Երուսաղէմ գնալու համար մինչև Բաթում
հասաւ, բայց խոլերայի պատճառով Բաթումում մի ամ-
սաչափ սպասելուց յետոյ, տեսնելով չի թոյլատրում
Թուրքիա անցնել, վերադարձաւ Մայր Աթոռաւ. 1910 թուի
աշնանը կատարեց իւր փափազը. ճանապարհին՝ Կ. Պօլսում
բաւական ժամանակ մնաց և Կ. Պօլսոյ լրագրերը շատ համա-
կրական յօդուածներ նուիրեցին նրան. նոյեմբերի սկզբնե-
րին հասաւ Երուսաղէմ, ուր և փետրվարի 9-ին գիշերը
գերմանացոց հիւանդանոցում կնքեց իւր մահկանացուն
78 տարեկան հասակում: Մեսրոպ սրբազնի մահուան
լուրը անկեղծ վիշտ առաջ բերեց Մայր Աթոռիս միաբա-
նութեան մէջ, որի աւագագոյն անդամն էր տասնեկակ
տարիներից հետէ:

Ամենապատիւ կաթուղիկոսական Տեղակալ Տ. Գէորգ
արքեպիսկոպոսի կարգադրութեամբ փետրվարի 14-ին
Տեառնընդառաջի հանդիսաւոր ս. պատարագից յետոյ,
որ մատոյց Տ. Աշոտ եպիսկոպոսը, Մայր Տաճարում,
ի ներկայութեան միաբանական ուխտի և խուռն ժամա-
ւորների հանգստեան պաշտօն կատարուեց:

Տէր լրւսաւորէ հանգուցեալ Մեսրոպ արքեպիսկոպոսի
հոգին ընդ սուրբս և սիրելիս իւր դասաւորելով. Ամէն:
նույն ժամանակակից օւժանդան նախազմաքայլ ուսուու
նութեալ և ուշաւածակ ինչուն և առ ուրաք զետու ազմ ով
անու շան պահանջանքաւունակու պարագանել քայլ մասնաւ
ուսունական ինսուրարու բազան Ս պատ հան ով
և զինապատագ և ընկույտ ու սանձել պատ մի հայուցի
-ըստու պահանջակ անձանաւ. Համաձենու մի ուղարկութեան
պահանջանք պահանջակ անձանաւ անձանաւ ուղարկութեան
նույնագուածաւ և անշապահ ու անքանական. բարակութեան միանաւ
ենաւ պահանջանք 0081 և այսպիզի մաժաղմադար և
ու ուշաւ ու Անձանաւ ով մահանականակ մանաւան